


Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում ավելցուկային քաշն ու ճարպակալումը հանրային առողջության կարևորագույն խնդիրներից են

Մարտի 4-ը ճարպակալման դեմ պայքարի միջազգային օրն է

ԱՀԿ-ի տվյալների համաձայն, ավելցուկային քաշը և ճարպակալումը ոչ վարակիչ հիվանդությունների (ՌՎՀ), մասնավորապես, սրտանոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, քաղցկեղների վարճացման ռիսկի գործոն են: Վերջին 30 տարիների ընթացքում աշխարհում ճարպակալումով տառապող մարդկանց թիվը մեծահասակների շրջանում աճել է կրկնակի, դեռահասների շրջանում՝ եռակի:



Կորոնավիրուսային հիվանդության պայմաններում առավել քան անհրաժեշտ է վերահսկել մարմնի քաշը, քանի որ միջազգային փորձի ուսումնասիրությունները փաստում են ավելցուկային քաշի/ճարպակալման և COVID-19-ի ծանր ընթացքի միջև պատճառահետևանքային կապը: 2-րդ, 3-րդ և 4-րդ աստիճանի ճարպակալումը խթանում է թոքաբորբի արագ զարգացմանը:

2016թ. ավելի քան 1,9 մլրդ մեծահասակ (բնակչության 39%) ունեցել է ավելորդ քաշ, որից 650 մլն-ը (13%) ճարպակալում: 2019 թ-ին ԱՀԿ-ի կողմից իրականացված հետապոտությունների համաձայն, աշխարհում մոտ 38 միլիոն մինչև 5 տարեկան երեխա տառապում է ճարպակալմամբ կամ ավելցուկային քաշով:

Փաստ է, որ ռիսկի գործոնների նվազեցման միջոցով ՌՎՀ-ի կանխարգելումը շատ ավելի ծախսարդյունավետ է, քան դրանց վաղ հայտնաբերմանն ու բուժմանն ուղղված միջոցառումները: Ընդ որում, այդ գործոնների շարքում առավել վճռորոշ է առողջ սննդային վարքագծի ձևավորումը՝ սկսած վաղ մանկությունից, ներառյալ 6 ամիս բացառապես կրծքով կերակրումը և ճիշտ հավելյալ սնուցման կապմակերպումը:

COVID-19-ի համավարակի պայմաններում առավել կարևոր է հետևել առողջ սննդակարգին, լինել ֆիզիկապես ակտիվ և հետևել բժշկի ցուցումներին:

Ըստ STEPS ազգային հետապոտության արդյունքների, Հայաստանի 18-69 տարեկան բնակչության 47,8%-ի մոտ առկա է ավելցուկային քաշ և ճարպակալում:



ՄԻ ԳՈՒՀԱԿԻՐ, ԵՂԻՐ ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻԴ ՄԱՍԻՆ

Երևանի առողջության առաջնային պահպանման օղակներում շարունակվում են իրականացվել 4/1-ում` (հեպատիտ B, հեպատիտ C, սիֆիլիս, ՄԻԱՎ վարակ) անանուն, անվճար, հասանելի և արագ հետազոտությունները, հնարավորություն տալով հիվանդությունը հայտնաբերել վաղ և բուժման համար առավել նպաստավոր փուլում:

Հետազոտությունները միտված են օգնել պահպանել բնակչության առողջությունը, կանխարգելել վերոհիշյալ հիվանդությունների պատճառով առաջացած բարդությունները:

Հերթական միջոցառումն էր «Մի գուռակիր, եղիր տեղեկացված կարգավիճակիդ մասին» հանրային միջոցառումը, որն անցկացվեց Երևանի կենտրոնական փողոցներից մեկում:

Միջոցառման շրջանակում իրականացվեցին հեպատիտ B-ի, հեպատիտ C-ի, սիֆիլիսի, ՄԻԱՎ վարակի անվճար, անանուն և արագ հետազոտություններ:



Ամեն տարի, մարտի 3-ին, ամբողջ աշխարհում նշվում է Լսողության պահպանման համաշխարհային օրը: Այն նպատակ ունի բարձրացնել իրազեկվածությունը, խթանել լսողության և ականջի առողջության պահպանման ամբողջ աշխարհում: Այս տարվա միջոցառումները նվիրված են երեխաների լսողության խանգարումների կանխարգելմանն ու վերականգնմանը և կրում են «Դարձնենք ձայնը ներդրում» խորագիրը:

Լսողության պահպանման միջազգային օր



Դարձնենք ձայնը ներդրում

ԱՀԿ-ի տվյալների համաձայն, աշխարհի բնակչության **5%**-ից ավելին կամ **466 միլիոն** մարդ (**432 մլն** մեծահասակ և **34 մլն** երեխա) լսողության կորուստ ունի: Մինչև 15 տարեկան երեխաների լսողության կորստի դեպքերի **60%**-ը պայմանավորված են վարակներով՝ կարմրուկ, կարմրախտ, խոզուկ, մենինգիտ, ցիտոմեգալովիրուսային վարակ, միջին ականջի քրոնիկական օտիտ (**31%**), պտղի ասֆիքսիա ծնվելիս, անհասություն, ծնվելիս ցածր քաշ, դեղնուկ, ծննդաբերական բարդություններ (**17%**), օտոտոքսիկ դեղերի կիրառում հղիների և կրծքով կերակրվող երեխաների շրջանում (**4%**) և այլն (**8%**):

ԸՍՏ ԱՀԿ-Ի, ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՆՊԱՆՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԵՆ

Երեխաների պատվաստում կարմրուկի, կարմրախտի, խոզուկի, մենինգիտի դեմ:

Դեռահասային և վերարտադրողական տարիքի աղջիկների ու կանանց պատվաստում կարմրախտի դեմ:

Միջին ականջի օտիտի սքրինինգ և համապատասխան վարում:

Նորածնային սքրինինգ:

Լսողության համար վտանգ ներկայացնող դեղերի կիրառման բացառում կամ սահմանափակում:

Ականջի խնամքի կանոնների պահպանում:

Բարձր աղմուկի ազդեցության նվազեցում:




Նորածինների լսողության սքրինինգը Հայաստանում մեկնարկել է 2008 թ-ից, իսկ 2018 թ-ից այն արդեն իրականացվում է հանրապետության ամբողջ տարածքում: 2020 թ-ին իրականացվել է **29 359 հետապոտություն**, հայտնաբերվել է ծանրալսությամբ **31 երեխա**, ովքեր գտնվում են հսկողության տակ՝ լսողության պրոթեզավորման կամ կոխլետար իմպլանտացիայի նպատակով:

2020 թ-ի ընթացքում կոխլետար իմպլանտացիա կատարվել է 1-ից 4,5 տարեկան **13 երեխայի**, որից **6-ի** վիրահատությունը կատարվել է պետպատվերի շրջանակում:

2020 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ սուրդոլոգիական դիսպանսերի հսկողության տակ է գտնվում լսողության խանգարում ունեցող մինչև 18 տարեկան **1138 երեխա**:



Առողջապահության
ԼՐԱՏՈՒ



COVID-19

ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ
ԻՐԱԿԻՃԱԿԸ

Մարտի 7-ի դրությամբ

422 ՆՈՐ
ԴԵՊԷ

2 ՆՈՐ
ՄԱՆ | **174679** ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԴԵՊԷ

751240 ԱՆՑԿԱՑՎԱԾ
ԹԵՍՏ

5849 ԲՈՒԺՎՈՂ
ԱՆՁ

164784 ԱՊԱՔԻՆՎԱԾ
ԱՆՁ

3221 ԸՆԴՆԱՆՈՒՐ
ՄԱՅԵՐԻ ԹԻՎԸ

ՕՊԵՐԱՏԻՎ ԶԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ **060 83 83 00**



Լրատվական գործունեությունն իրականացնում է «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ: Վկայական թիվ 01Ա.016493, տրված 07.09.1995թ.:
Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:
Մեր հասցեն է՝ 0051, Երևան, Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝ +374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար
Լուսինե Հովհաննիսյան
Խմբագիրներ՝ Մարո Գաբրիելյան, Նարինե Ավետիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Անդրեյ Աստվածատրյանի